

“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԹ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1900

ԹԻՒ 5



ԵՂԻԱ ԵՒ ՅԵՋԱՐԵՒ

Ասկէ երեք հազար տարիներ առաջ մէկ, ճշմարիտ և սուրբ Աստուծոյ երկրպագողներն էին միայն իւրայեղի ժողովուրդը: Կային ազգեր որ անոնցմէ աւելի յառաջացած էին գիտութեան և գրականութեան մէջ, բայց կռապաշտ էին: Եւ իւրայեղի մէջ անգամ երկու թագաւորութիւններուն մեծին մէջ — վասն զի ազգը երկու թագաւորութեան բաժնուած էր — Եհովայի երկրպագութիւնը գաղտնի պահուած էր: Այն ժամանակ որուն վրայ հիմա կը գրենք, երկու գլխաւոր անձինք կային, որոնց մէկն էր Եհովայի ներկայացուցիչը և անոր երկընթացութեան պաշտպանը, իսկ միւսն էր առաջնորդն ամէն բանի որ չար և ապականիչ էր ազգին մէջ:

Այս վերջինն էր Յեզարէլ, Աքաաթ թագաւորին կինը: Խորոխտ և գոռոզ կին մըն էր ան, և չէր քաջուեր ունէ ոճիրէ որուն պէտք տեսնէր իր նպատակներուն հասնելու համար: Յեզարէլ Սիդոնացոց թագաւորին ազնիւն էր, և իրեն հետ իւրայեղի մէջ բարաւ Բահաղի պիղծ պաշտամունքը: Յեզարէլ միտքը դրաւ Բահաղի պաշտոնը իր երկանը ժողովրդին կրօնքն ընել և ջնջել Եհովայի պաշտամունքը:

Աքաաթ բարոյովն չար մարդ մը չէր (Տես Գ. Թագ. ԻՍ. 27-29), բայց բարոյովն իր կնոջ ազդեցութեան ներքեւ կը գտնուէր, ուստի արքունիքին խանութիւնը կռապաշտութեան կողմն էր:

Միւս անձն էր Եղիա մարգարէն: Թէ ի՞նչ ընտանիքէ էր Եղիա, բան մը չենք գիտեր, բայց ինքը կ'ըսէ, «Զորաց Տէր Աստուծոյն համար մեծ նախանձաւորութիւն ունեցայ»: Աստուած մասնաւոր ինձաւք կը տանէր Եղիայի կերակրեց զանիկա ագուաներու միջոցով, աճեցուց Սարեփթացի որբեւարիին իւղը և ալիւրը, և կրակի մա-

խրի տակ չթ եփեց մինչ եղիա կը քնանար գիհի մը ներքե: Եղիա ա մենէն մեծ հրաշագործն էր որուն նմանը ախարհ տեսած չէր բայ ի Մով սէսէ: Ինքը առաջինն եղաւ որ մեռ եալ յարուց, և թերևս Հին կտա կարանին ամենէն փառաւոր հըրաշքն էր անոր երկինքէն կրակ իջեցընելը իրիկուան զոհը այրելու համար: Եղիա առանց վախնալու մեռցուց Բահադի մարգարէները ժողովորդը մոլորցնելուն համար, թէպէտ գիտէր թէ անոնք թագուհիէն կը պաշտպանուէին, և ինք կրկին և կրկին ներկայացաւ թագուհիին, թէպէտ Յեզարէլ անոր կեանքը կը փնտռէր: Այս դէպքերէն մէկը հոս կը ներկայացուի:

Եւ այսպէս շարունակեց Բահադի ծառային և Եհովայի ծառային պայքարը: Աւաղ, Տասը Յեղերը չդարձան իրենց կռապաշտութենէն, և անոնց թագաւորութիւնը կործանեցաւ: Այս երկուքէն Եղիա հրեղէն կառքով երկինք վերացաւ առանց մեռնելու, իսկ Յեզարէլ, Եղիայի մարգարէութեան համաձայն, շուներուն կերակուր եղաւ:

ՄԻԱՅՆ ԻՐ ԱՆՁԸ

Փողոց պտրտող խումբ մը պզտիկ տղոց խոստացուած էր որ գեղին մէկ տօնին օրը կառքերով պտրտին, եթէ որչափ ժամուն այսինչ տանը առջև գտնուին: Տեսցիները առաւանց հազիւ անկողնէ ելած էին, և ահա տեսան լրագիր ծախող փայլուն պզտիկ տղայ մը որ տան առջև դրան աստիճաններուն վրայ նստած էր, իր պզտիկ եղբոր միտա ձեռքը իր ափին մէջ ամուր մը բռնած: Քանի մը հարցումներ ըլլայէն ետքը հասկցուեցաւ թէ տղան ժամը 4ին (կէս գիշերէն 4 ժամ ետքը) եկած էր, և եղբայրը փոքրիկ ձիմանին իր գիշերուան քունը գրան քարին վրայ լնցուցած էր: «Ձիմանի երբեք ատանկ տեղ չէ գացած, ասոր համար կանուխ եկայ որ չըլլայ թէ միւս տղաքը մեզմէ առաջ գան և մեզի տեղ չմնայ», ըսաւ տղան: «Իրենց համար տեղ մը գրաւել կ'ուղէ», ըսաւ մարդ մը ինդպով: Բայց տան մտացի մայրը «Միայն թէ պէտք էր որ ուրիշներու համար ալ խորհէր», ըսաւ: Այդ պէտք է ըլլայ մեր բոլոր ըրածն արդարացող շարժառիթը: Բոլոր մեր

խորհուրդները, նպատակը և ջանքերը մեր շահածէն ուրիշ մէկու մըն ալ օգնել պէտք է ըլլան: Հարստութիւն, ուսմանք, դիրք և պաշտօն ինքնին ազնիւ վախճաններ չեն: Եթէ ատոնք գործածուին մեր անձերուն համար միայն, անձնասիրական և անարժան բան կ'ըլլան: Պէտք է ուրիշներու համար ալ մտածել: Մինչև անգամ երկինքը երկինք պիտի չըլլար, եթէ կարող ըլլայինք միայն մեր անձերուն համար ստանալ:



ՇԻՊԱՅԻ ՏԱՃԱՐԸ

Ճափոնի մայրաքաղաքին, Թոքիոյի մէջ, որ առաջ Ետօ կը կոչուէր, Պուտ

կործանեցաւ, և անկէ ի վեր Միքատօն թէ՛ քաղաքական և թէ՛ կրօնական պետ է:

ԵՐԿՈՒ ԵՈՒՆԵՐԸ

Տան մը մէջ երկու շուներ կային. մէկն էր ձիփ, խելացի աղուոր իուլան տական շնիկ մը, միւսը՝ ձէք, խոշոր դամիւռ (պահապան շուն) մը. երկուքէն մէկն ալ այնչափ փայլուն չէր, բայց ազնիւ սկզբունքի տէր էին: Ձիփ տան մէջ կը բնակէր, և ձէք՝ փառուր: Բայց երկուքն ալ շատ բարեկամ էին իրարու հետ: Ձիփ վար աչքով չէր նայեր ձէքի վրայ, և ձէք չէր նայ խանձեր ձիփի:



տայական տաճար մը կայ: Գլխաւորապէս ուշադրութիւն կը դրաւ անոր համար որ Շոկուններէն շատին գերեզմանատունն էր: Ներսի դրան երկու կողմի դարդերը կրիայի կեղևէ են, և տաճարին քանդակները ու ոսկեզօծումները բարբարոսական ճոխ շքեղութիւն ունին: Շոկունները ճափոնի քաղաքական կառավարիչներն էին: Երկար ժամանակ Միքատօն, այսինքն կայսրը, ազգին կրօնական պետը միայն կը նկատուէր և մեծ հոգ կը տարուէր որ հասարակ ժողովրդին աչքին չերևնար: Միքատօն մարդկային ներկայացուցիչն էր արևին, և այսպէս, կերպով մը մասնակից կը համարուէր Աստուածային բնութեան: Բայց 1872ին Շոկուններուն իշխանութիւնը վերջապէս

Անցեալ տարի տնեցիները ամարանոց գացին ագարակ մը, լճին եղերքը, քաղաքէն իրր տասնըհինգ մղոն հեռու: Ձիփ ալ անոնց հետ գնաց տղաքը դրօսցնելու համար: Ձէք տան մէջ մնաց պահպանութեան համար: Սիրտը քեչ մը նեղացաւ և մրմուռաց, բայց կեցաւ: Ձիփի վագանցի տեղերը ագարակատիրոջ ամբարանոցին մէջ էին: Չոր, հանգստաւէտ և առողջութեան նպաստաւոր տեղեր: Վերջապէս հաճելի փոփոխութիւն մը եղաւ Ձիփի համար երբ հոն գնաց քաղաքի սենեակներէն: Բայց անոր բոլոր հանգստութիւնը կ'արուէր Նիւֆրնալէնտի շան մը վայրագութեան համար: Ներսն կը կոչուէր անիկա, և իր վայրենի բնութիւնը կը ցուցնէր կրցածին


չափ: Որովհետև կերակուրի ժամանակ և գիշեր ասեն ձիփ կ'ընկերանար ամբարանոցի շանը հետ, համբերեց այդ բռնաւորին գէշ լեզուին և չար վարմունքին, յուսալով թէ պիտի փոխուէր բնաւորութիւնը: Բայց ներոն ատանկ բաներ չէր խորհեր, ոչ ալ կը շիտկէր ինքզինք:

Օր մը ձիփ աներևոյթ եղաւ: Յաջորդ առաւօտ, տղոց ելլելէն առաջ, դատաստանական ատեան մը կազմուեցաւ: ձիփի հաշելու սուր ձայնը կը լըսուէր, ամբաստանութեան ձայն: Ներոն մուշտարու ցած ձայնով ինքզինք կ'արդարացնէր ձէքի առջև. որ կը գոռար արդար բարկութիւնով: Նեժկը տեղի ունեցաւ: Եւ ահա նիւֆընտլէնաի շունը կռնակին վրայ եկաւ, չորս ոտքերը վեր վերցուց դէպ ի օդը իբրև նշան հպատակութեան գերագոյն զօրութեան առջև:

ձիփ տուն վազած էր, դաշտի մը մէջէ գորբերէ տեսած չէր առաջ բայց միայն կառքին պատահանէն: Գացած իր գանգատները թափած էր ձէքի համակրող ականջներուն: Իր երկայնամիտ բարեկամին պատմած էր ճիշդ եղելութիւնը, և իր քաջ ընկերը ամբարանոցի առաջնորդած էր: Մնացածը յայտնի է ինչպէս ըսուեցաւ վերը: Ձէք երբեք չէր վարաներ կատարել պարտք մը երբ պարզ կը տեսնէր անոր կարևորութիւնը:

Արդարութիւնը ի գործ դրուելէն ետքը դատաւորը և ամբաստանիչը կեցան միայն մէյակէ շուր խմելու համար, և ձիփ իր թաղած տեղէն ուկոր մը հանելով հրամցուց անոր: Յետոյ ձէք, պոչը վեր տնկած իբրև նշան հանդարտ մտքի, ետ դարձաւ դէպ ի քաղաք: Ներոն ալ անանկ վայրագութիւններ չըրաւ: չէր կրնար վստահ ըլլալ թէ ձէք նորէն պիտի չգար վրէժխնդրութիւն ընելու, և տնեցւոց հոն մնացած բոլոր ժամանակին մէջ

ձիփ կարող եղաւ իր ճաշը խաղաղութեամբ վայելել:



ԿՏԱԾԵԼ

Կտածելու (հաճի էթմէք) սովորութիւնը մարդոց բոլոր ազգերուն մէջ տեսնուած է մարդկային պատմութեան սկիզբէն հետէ: Բարբարոս ցեղերու մէջ, ուր սր ժողովուրդը գրեթէ մերկ կը պտտտի, բնականապէս աւելի ընդհանրացած էր այդ սովորութիւնը զարդի



Նախնի քրիստոնեաները շատ անգամ խաչ մը կը կտածէին իրենց ձեռքին կամ բազուկին վրայ: Այդ խաչը իրենց հաւատքը շարունակ խոստովանելու նշան մըն էր: Եւ մենք գիտենք թէ հիմա ինչպէս հասարակ բան մըն է Սուրբ Երկիրն այցելող ուխտաւորներուն համար իրենց մարմին վրայ նշան մը կրել իբրև յիշատակ իրենց այցելութեան: Բայց մենք երբեք չտեսանք մէկը որ այս ճափոնցի տղուն չափ շատ կտածներ ունենար: Պէտք է յօժարած ըլլայ շատ մը ցաւեր կրելու որպէս զի գեղեցիկ երևնայ: Եւ երբեք չկրնար տեսնել իր կռնակի պատկերները, բայց եթէ երկու հայելիներու միջոցով: Կտածելու գործողութիւնը վտանգէ զերծ չէ, վասն զի օտար նիւթ կը մտցուի մարմինն մէջ, և գործածուած գունաւոր նիւթերէն մէկ քանին անտարակոյս վտանգաւոր են: Կը կարծենք թէ աւելի աղէկ ճաշակ մը կը սորվեցնէ թէ բոլոր այսպիսի նշանները և զարդերը մարդու աւելի սղեղութիւն կու տան քան գեղեցկութիւն:

ՀԱՆԱՏԱՐԻՄ ՀՈՎԻՒ ՄԸ

Գերմանացի հովիւ տղայ մը, որուն անունն էր Կէրհալթ, կը հսկէր իր ոչխարներուն վրայ որ կ'արածուէին անտառի մը եղերքը գտնուող հովտի մը մէջ: Եւ ահա որսորդ մը ելաւ անտառէն և հարցուց, «Ո՞րչափ հեռու է ասկէ մինչև ամենէն մօտ եղող գեղը?» «Վեց մղոն», ըսաւ տղան, «բայց միայն ոչխարներու ճամբէ կարելի է երթալ և դիւրին է մոլորիլ:» Որսորդը ճամբուն վրայ նայեցաւ և ըսաւ, «Տղաս, ես անօթեցած ու ծարւած եմ: Ընկերներս և ճամբաս կորսնցուցի: Ոչխարներդ հոս թող և ինձի ցուցուր ճամբան, ու քեզ աղէկ պիտի վարձատրեմ յոգնութեանդ համար:» «Ես չեմ կրնար թողուլ ոչխարներս, անոնք պիտի մոլորին անտառներուն մէջ, գայլերէն պիտի պատառուին և

համար: Բիշ փափաք կայ անշուշտ պատկեր ծեծել տարու մարդու կուրծքին վրայ, որ հանդերձներէն կը ծածկուի: Կը յիշենք նաւաստի մը որ անգամ մը նաւի մը պատկեր ցուցուց, որ իր կուրծքին վրայ կտածուած էր: Հին ժամանակները գերիները կը կտածուէին ցուցնելու համար թէ որո՞ւ կը վերաբերէին, նաև ոճրագործներն ալ անոնց յանցաւորութիւնը ցուցնելու համար: Տեսակ տեսակ շատուածներ պաշտոնները կը կտածուէին իրենց շատուածներուն մասնաւոր նշանով:

գողերէն գողցուին:» «Ի՞նչ վնաս ունի, անոնք քու ոչխարներդ չեն: Անոնցմէ մէկուն, երկուքին կորուստը մեծ բան մը չէ քու տիրոջդ համար: Ես քեզի մէկ տարուան համար առնելիք վարձքեդ աւելի ստակ կու տամ:» «Չեմ կրնար երթալ, պարոն, իմ տէրս վատահումիւն դրած է վրաս, և կը վճարէ իմ ժամանակիս համար: Եթէ ժամանակս ձեզի ծախեմ, և ոչխարները կորսուին, զանոնք գողցածի պէս պիտի ըլլամ:» «Ուրեմն,» ըսաւ որսորդը, «ոչխարները ինձի կը վատահիս մինչև որ զեղ երթաս և ինձի կերակուր, ջուր և առաջնորդ մը բերես: Ես աղէկ հող պիտի տանիմ առնոց:» «Ոչխարները,» ըսաւ տղան, «ձեր ձայնը չեն ճանչնար, և...» հոս կէրհարլով կեցաւ: «Եւ ի՞նչ,» ըսաւ որսորդը, «չ՞իս կրնար վատահիլ ինձի: Ես խարեբայ մարդու կը նմանիմ:» «Պարոն,» ըսաւ տղան կամաջուկ մը, «դուք ջանացիք դիս անհաւատարիմ ընել և իմ տիրոջս տուած խոստումներս դրժել տալ ինձի: Ինչէն զիտնամ թէ դուք ձեր ինձի տուած խոստումները պիտի պահէք:»

Որսորդը խնդաց, վասն զի զգաց թէ յաղթուեցաւ: «Կը տեսնեմ, զաւակս, որ դուն բարի և հաւատարիմ աղայ մին ես: Քեզ պիտի չմոռնամ: Ճամբան ցուցուր ինձի, և ես կրցածս պիտի ընեմ քեզի համար:»

Ճիշդ այդ ատեն խուսի մը մարդիկ երան անտառէն, և հովիւը հասկցաւ թէ որսորդը մեծ Գուքն էր, այն բուր հողերուն տէրը, և ասոնք անոր ծառաներն էին որ զանիկա կը փնտրուէին: Գուքսը այնքան հաւնեցաւ աղին, որ զանիկա դպրոց դրաւ, և տղան հարստացաւ ու երևելի մէկն եղաւ:



ՅՈՎԱՀԷՆԻՆ ԸՆԾԱՆ


Ամերիկեան Նիւ Հէմփշիր նահանգին Հէնիքըր քաղաքի փոքրիկ գերեզմանատան մէջ քար մը կայ որ հանգստավայրը կը ցուցնէ Մէյրիի, թոմաս Ուոլթըրի կնոջ, որ մեռաւ 1814ին իննսուներորս տարեկան: Այդ պարզ յիշատակարանին մէջ չկայ բան մը որ օտարականին երկրորդ անգամ նայել տայ, և անտարակոյս արագ մը քովէն կ'անցնի ան եթէ ծերունի ժամկույր կամ մարդասէր բնիկ մը չընէ Մէյրի Ուոլթըրի պատմութիւնը:

Իուրանտացի մը, ճէյնս Ուիլքինս, և անոր դեռատի կինը 1720 Յուլիսին լքնաբնակարանէ նաւեցին Նիւ Հէմփշիր երթալու համար: Բայց նաւը ծանրաշարժ էր, և օր մը յարձակում կրեց ծովահէններու նաւէ մը: Ընդդիմութիւնը յիմարութիւն պիտի ըլլար: Ծովահէնները նաւին մէկ կողմին վրայ

լեցուեցան, կապեցին ամէն մարդ որ գտան, և առին ինչ որ կար նաւին մէջ, մինչև անգամ քէջ արժէք ունեցող բաները: Ծովահէններուն նաւապետը նաւուն սենեակը գնաց: Կից սենեակի մը մէջ Տիկին Ուիլքինս պառկած էր: «Հող ինչու կեցեր էք,» ըսաւ նաւապետը: Կինը, փոխանակ պատասխանելու, փոքր մանկիկի մը երեսը լաւ ցաւ: «Նաւապետին ընթացքը փոխուեցաւ: «Մա՞նչ է թէ աղջիկ,» հարցուց ցած ձայնով մը: «Աղջիկ է:» «Միկրտամ էք զանիկա:» «Ոչ:» «Ուրեմն,» ըսաւ նաւապետը մեղմով, «ես դեմք մտոր անունը, և պիտի արձակեմ ձեր մարդիկը ու պիտի մեկնիմ ձեր նաւէն առանց վնասելու կամ կորուստելու: Աղէկ անուն մը դրուելու է ասոր: Կրնամ դեմ աղջկան անունը:» «Սյոյ:» Բիրտ նաւապետին աչքերը արցունքով լեցուեցան երբ բռնեց մանկիկին բարակ ձեռքը և շնչեց, «Մէյրի,» և ուրիշ բառեր այ, զորոնք Տիկին Ուիլքինս չստաց: Այսուհետեւ նաւապետը և իր նաւաստիները իրենց նաւը վերադարձան:

Բայց յետոյ չուտով նաւապետը մինակ էր դարձաւ, իր հետ բերելով ծրար մը մետաքսեղէն զոր Մէյրիի քով դրաւ: «Թող ասիկա հագնի իր ամուսնութեան օրը,» ըսաւ և դնաց դեռ Տիկին Ուիլքինս շնորհակալ ըլլալու կարող չեղած:

«Ովիկան Մէյրի,» ինչպէս կոչուեցաւ մանկիկը, ամուսնացաւ 1740ին թոմաս Ուոլթըրի հետ: Ծովահէնին ընծայած մետաքսեղէնը հագաւ իր հարսնիքի հանդէսին: Երբ հագան նաև անոր թոռը և թոռան թոռը իրենց հարսնիքներուն:



ՅԵՐՈՒՆԱՋԱՐԳ ՌԻՍԱՆՈՂ ՄԸ

Փէրըն՝ Մէկէնի հանդէսին մէջ մտաբեր տեսնուած է յօգուած մը որուն տպագրութեան փորձերը վիքթորիա թագուհին կը սրբագրէ:

Վիքթորիա թագուհին շատ պարտականութիւններ և պատասխանատուութիւններ ունի, ուստի շատ ժամանակ կու տայ քաղաքական խնդիրներու ուսումնասիրութեան: Այս պատճառով իրողայի գործնական քաղաքական նութեան մեծագոյն կենդանի հեղինակութիւններէն մին եղած է: Եւ յիշեալ յօգուածէն կ'երևնայ թէ իր իշխանութեան աւելի վերջին տարիներուն մէջ քաջ ծանօթութիւն մը ստացած է դժուար լեզուի մը զոր իր հպատակներուն մէկ մեծ մասը կը խօսի: Կ'ըսուի թէ Վիքթորիա թագուհին իրեն սովորութիւն ըրած է Հընդկերէն լեզուով գրել իր կեանքին առօրեայ դէպքերը, և այս մասնաւոր նպատակով օրագրութեան տոմար մը կը բռնէ: Հնդկերէնը կը խօսի սահուն կերպով, և իր այս վերջին տասը տարիները զանիկա ուսումնասիրելու և Արևելքի իմացական դանձարաններուն ծանօթանալու տուած է: Թա-

գուհին հիացուցած է իր Հնդիկ այցելուները, անոնց հետ անակնկալ կերպով ընտիր Հնդկերէն խօսելով: Ինչպէս ծանօթ է, երբ թագուհին պալատին մէջ կը գտնուի, մէկ կամ երկու Հնդիկ ծառաներ կը սպասուրեն անոր: Բայց շատեր չեն գիտեր թէ անոնց հետ միշտ Հնդկերէն կը խօսի:

Ընդհանուր սրանցընում կը ցուցնի թագուհին իր այդ ձերութեան մէջ ոչ միայն Հնդկերէն խօսիլ սորվել որոշելուն համար, այլ նաև անոր համար որ կը հետաքրքրուի Հնդկական գրականութեան, և կ'ուզէ ծանօթանալ իր Արևելքի հպատակներուն գաղափարներուն և բազմաձևներուն:



ՄԱՐՏԻ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍՈՒՆԸ

Ա	Ը
Ն	Ի
Ա	Ք
Ն	Մ
Ի	Ս
Ն	Ս
Ա	Ք
Ի	Ք

Լուծեցին, Կ. պոյն. — Կարապետ Ս. Պոյսճեան, Պ. Յ. Միքէլեյան, Վահան Ճ. Թովմասեան, Ե. Ս. Գարբիէլեան: Աստղագր. — Հայկանյշ Տօնճեան, Եւնիկէ Քէլապան: Զմեռանիւ. — Գարեգին Ղարապան: Պարտիզակ. — Արտաշէս Հ. Փաշաեան, Եղիազար Յ. Կարապետեան, Տեգրան Յ. Կարապետեան, Պրուս. — Յովհաննէս Կարապետեան: Մարզաւ. — Աբգար Հայկազեան, Ղազարոս Գուշտուրաճեան: Կեսարիա. — Մ. Կ. Համի Մինասեան: Տիրապէքի. — Խաչատուր Յ. Անտօնեան: — Հուփօթէ Սլադեան: Կարս. — Ստեփանի Գրեգորեան, Բաւական Նինէճանեան, Աթլաս Բարսեղեան, Վարդանուշ Վարդանեան, Եսթեր Լէփնիճեան, Երանեակ Քաւահասեան, Հոսիկ Սարգիսեան:

ՀԱՆԵԼՈՒԿ ԵՐՈՒՐ ԳԻՐՔԵՆ

0	*	*	0		
0	*	*	0		
0	*	*	0		
0	*	*	*	0	
0	*	*	*	*	0
0	*	*	*	*	0
0	*	*	*	*	0
0	*	*	*	*	0
0	*	*	0		
0	*	0			
0	*	0			

1. Սոգոմի արքայ Աբրահամ ժամանակ, 2. Հրէեց ամենեքէն մին: 3. Յակոբոյ օրդուց մին: 4. Հռոմոյ կայսերաց մին: 5. Նաւերական հին քաղաք մը: 6. Ծովեզերայ քաղաք մը որ կը յիշուի Պոզոմի առաքելական ճամբորդութեան մէջ, 7. Տեղ մը ուր իսրայելացիք յաղթեցին Փղաթացաց Սամուէլի ժամանակ, 8. Տեսակ մը հով: 9. Մին երկու այրի հարսերէն օրոնք չուզեցին թողուլ իրենց կեսուրը (աղէն ձախ): 10. Պատերազմական գործիք մը (աղէն ձախ):

Նշանակեալ անունները եթէ վերի խաչաձևին նման շարեւ, ձախակողման զերոնները վերէն վար պիտի կարգուին, ուրիշ մէկ անուշը. իսկ առաջինը իր Պոզոմի մէկ հաւատարիմ արքային յիշատակը: Կեսարիա. ԱՅԻ ՄԵՐԱՍԵԱՆ

Տարեկան 6 դահ. արծաթ, կանիկ, ամբողջական զարդարութեան կողմէն Ամերիկայի Միացեալ Նահանգներու Կրիտ Տնօրէն: Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՆՈՐ ՊՈՅՆՅԱՆԻ
Ֆինանսները Երգուշու. Ամերիկան խան